

# ԸՇ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ «Հայաստան-Իրան հարաբերություններն ընդհանուր շահերի համատեքստում» աշխատաժողովը



Սույն թվականի փետրվարի 9-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ «Հայաստան-Իրան հարաբերություններն ընդհանուր շահերի համատեքստում» խորագրով աշխատաժողովը:

Աշխատաժողովին մասնակցեցին Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրին, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանը, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր առաջին դեսպան Վահան Բայբուրդյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության Սահմանակից երկրների վարչության խորհրդական Գրիգոր Մելքոնյանը, «Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոնի համակարգող Միքայել Յալանուզյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողները:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը ողջունեց աշխատաժողովի մասնակիցներին. «Աշխատանքային տարին մենք սկսում ենք իրանագիտական միջոցառումներով: Շատ կարևոր է մեզ համար իրանագիտական ուսումնասիրությունների զարգացումը: Չնայած նրան, որ Հայաստանի և Իրանի միջև ընդամենը 31 տարվա դիվանագիտական հարաբերությունների պատմություն կա, մենք չպետք է մոռանանք, որ մեր երկու ժողովուրդների, երկու պետությունների միջև այդ հարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն, և սա խորքային, քաղաքակրթական մակարդակի վրա է»:

ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրին ասաց. «Ուրախ եմ Իրանի իսլամական հեղափոխության հաղթական 44-րդ տարեդարձի նախօրեին գտնվել այս աշխատաժողովին, որը նվիրված է Հայաստանի և Իրանի դիվանագիտական հարաբերությունների հաստատման 31-րդ տարեդարձին: Մենք այժմ շատ զգայուն ժամանակահատվածում ենք գտնվում, և գիտա-հետազոտական կենտրոնների դերակատարությունը շատ կարևոր է, քանի որ մենք կկարողանանք հենվել պատմական փաստարկների վրա: Մեր երկու երկրները պետք է ունենան հատուկ օրակարգ»:

ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանն անդրադարձավ Իրանում հայկական համայնքի ձևավորմանը, Նախիջևանի մասին պատմական փաստերին, նաև նրան, թե ինչպես Նախիջևանը սահման ունեցավ թուրքական աշխարհի հետ:

ՀՀ արտաքին գործերի նախարարության Սահմանակից երկրների վարչության խորհրդական Գրիգոր Մելքոնյանը ներկայացրեց Հայաստան-Իրան հարաբերությունների վերջին զարգացումները:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ Գոհար Իսկանդարյանը հանդես եկավ «Հայաստանի և Իրանի մոտեցումները տարածաշրջանային նոր մարտահրավերներին» թեմայով զեկուցմամբ: Նա ներկայացրեց, թե ինչպես դրվեցին հայ-իրանական հարաբերությունների հիմքերը, ինչպիսի զարգացումներ տեղի ունեցան հետագայում, հատկապես 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից հետո: «Հայաստանի անվտանգության թիվ մեկ երաշխավորը, ըստ էության, Ռուսաստանն է, որի հետ կնքված է ռազմավարական դաշինք: Փաստացի Հայաստանի անվտանգությունն ապահովող երկրորդ երկիրը Իրանն է, որի հետ թեպետ կնքված չէ ռազմավարական դաշինք, սակայն, ըստ էության, այսօր Իրանը Հայաստանի բնական դաշնակիցն է»,- նշեց Գոհար Իսկանդարյանը:

Աշխատաժողովում ներկայացվեցին նաև «Հայաստան-Իրան Էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքները», «Քաղաքական հարաբերություններն Հայաստանի և Իրանի միջև», «Մշակույթի և տեղեկատվության ոլորտներում համագործակցություն երկու երկրների միջև» թեմաներով զեկուցումներ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**